

ՂԱՋԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ - 177

ԿՐԿԻՆ ՆԱՅԱՊԵՏԻ ԶԱՐԿԻ ՆԵՐՔՈՒ...

Յո՞վհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Դերենիկ Դեմիրճյան, Լեւոն Շանթ դասական փաղանգում նա նահապետի կարգավիճակ ուներ՝ ոչ միայն առիթընող արտաքին եւ իմաստնացած տարիք, այլեւ գրական, մանկավարժական, հրատարակչական եւ խմբագրական աշխատանքի անուրանալի վաստակ: Դայ գրողների՝ աշխարհում առաջին միութունը, որ «Վերնատուն» էր անվանվել, լուսավոր ջախ փարոս էր հայաշատ Թիֆլիսում, նախորդ դարագլխին մեր ազգային գրականության հետագա ուղին նախանշող սլաքավար:

Ահա թե ինչու «վերնականների» ավագի ավանդական տունը այս տարի, արդեն 18-րդ անգամ, անցավ «փորձված» ջերմությամբ եւ սիրով, մեծ ու փոքրով, իր անսահման սիրելի ծննդավայրում՝ Բոլնիսի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղում: Եկել էին մայրաքաղաքից ու Ջավախքից, Երեւանից ու հայաշատ այլեւայլ բնակավայրերից - գրողներ ու մտավորականներ, գրականության սիրահարներ ու լրագրողներ, ուսուցիչներ եւ աշակերտներ, քաղաքական, հասարակական եւ ազգային գործիչներ:

Եվ բոլորի նպատակը մեկն էր. հայ գրականության եւ հայ մանկավարժության դասականի մեծարումը, նրա թողած հարուստ ժառանգության հետ մերձեցումը, նոր ծանոթությունների ու լավ գործերի նախանշումը:

Իր բացման խոսքում տողերիս հեղինակը առանձնապես կարեւորեց Ղազարոս Աղայանի դերը որպես մանկավարժի եւ մանկագրի, խորին շնորհակալություն հայտնեց մունիցիպալիտետի ղեկավարությանը, Երեւանի «Բոլնիս-Խաչեն» հայրենակցականին, գյուղի հանրությանը՝ դասականի նկատմամբ մեծ ակնածանք եւ պատասխանատվություն ցուցաբերելու համար: Ի պատիվ կյանքից հեռացած բանաստեղծուհի եւ թարգմանիչ Անահիտ Բոստանջյանի եւ Երեւանցի արձակագիր

ու լրագրող Վանիկ Սանթրյանի հիշատակներին հայտարարվեց լուսնային ռուպե: Տոնախմբությանը ողջույնի խոսքով հանդես եկան եւ



Ելույթ ունեցան Բոլնիսի մունիցիպալիտետի վարչության նախագահ Դավիթ Շերազադաշվիլին, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրջյանը, Զայաստանի գրողների միության պատվիրակության ղեկավար Տիգրան Նիկողոսյանը, ԶԿ «Խաղաղության հիմնադրամ» ղեկավար Գորգի Թումանյանը, տեղի հանրային դպրոցի տնօրեն Մելիս Սարգսյանը, բանաստեղծուհի Լուսինե Վանոյանը, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի ղեկավար Լեւոն Զիդիլյանը, Երեւանի «Բոլնիս-Խաչեն» հայրենակցական միության նախագահ Ավետիք Ոսկանյանը, թբիլիսցի բազմավաստակ մանկավարժ Նորայր Բաղդասարյանը, Բոլնիսի հայկական դպրոցի մայրենիի ուսուց-



Ավետիք Ոսկանյան



Դավիթ Շերազադաշվիլի

չուհի Զոյա Ռոստոմյանը, ինքնուր բանաստեղծուհի Մարինե Խաչատրյանը:

Տոնախմբում մասնակցում էին նաեւ Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Գոգի Մեշվեթիանին եւ Ռուսլան Պողոսյանը, «Բազմազգ Վրաստան» միության նախագահ Անուշ Ստեփանյանը, Զամաշխարհային հայկական կոնգրեսի վարչության անդամ Ռաֆիկ Աղաջանյանը, Բոլնիսի մունիցիպալիտետի մշակույթի ծառայության պետ Թեոնա Աբրահիմյանը, կրթության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, անվանի թարգմանիչ Գիվի Շահնազարը, բարերար Ալիկ Մելքոնյանը...

Զանդիսույթի համերգային մասում հանդես եկան Բոլնիս-Խաչեն գյուղի հանրային դպրոցի ասմունքողները, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի մենակատարները, դուդուկահարների խումբը եւ «Տարուն» ազգագրական պարի համույթը:

Զանդեսն անցավ ջերմ եւ անբռնազբոս միջավայրում՝ ապացույց այն բանի, որ վիրահայրի գրական եւ մշակութային տոնախմբություններին 2000 թվականից հետախոս միացած Աղայանական օրը շնորհիվ վիրահայ գրողների նոր «Վերնատան», գյուղի հանրության եւ «Բոլնիս-Խաչեն» հայրենակցականի, դեռ շատ ու շատ տարիներ կգարդարի հայ եւ վրաց եղբայր ժողովուրդների մշակութային առօրյան, կօգնի ավելի մերձեցնելու մեր ժողովուրդներին եւ գրականությունները:

ԺՈՐԱ ՍՆԽՅՅԱՆ
ՎԳԳ «Վերնատուն» միության նախագահ

ԵՐԹ ԶԼԻՆԵՐ ՄԱՆԿԱԳԻՐ ԱՂԱՅԱՆԸ, ԱՊԱ ԶԵՐ ԼԻՆԻ ՆԱԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԱՂԱՅԱՆԸ

Թերեւս սխալված չենք լինի, եթե ասենք, որ մանկագիր Ղազարոս Աղայանն ու մանկավարժ Ղազարոս Աղայանը հրաշալիորեն փոխլրացնում են միմյանց. չլինել մեկը, հավանաբար չէր լինի նաեւ մյուսը, եւ մենք չէինք ունենա մանկավարժ-մանկագիր Աղայանին:

1880-ական թթ.-ի սկզբին գրեթե միաժամանակ լույս տեսան Աղայանի «Անահիտ» եւ «Սրինգ հովվական» գրքերը, «Վարժարան», ապա «Աղբյուր» ամսագրերում տպագրվեցին նրա մի շարք մանկական ստեղծագործություններ: Այդ բանաստեղծություններն ուշագրավ էին նրանով, որ գյուղի կենցաղի մասին գրում էր պարզ ու բնական՝ որքան կենցաղը էր պարզ ու հասարակ: Միեւնույն ժամանակ, եթե ուշադրություն դարձնենք «Սրինգ հովվական» գրքի տիտղոսաթերթին՝ «Երգեր, ոտանավորներ եւ առակներ ընթերցասեր մանուկների համար» տառը եւ ուսումնարանում, ապա կտեսնենք, որ դրանք հատուկ գրված են մանուկների համար: Այսինքն՝ այս գրքով առաջին անգամ հայ գրականության պատմության մեջ մանուկներին հասցեագրված գրականություն էր տպագրվում: Ժողովածուի հիմնական նյութը նվիրված էր բնությանը, բնական երեւույթներին,

րին, գյուղի կյանքին եւ խիստ ճանաչողական մշակութային ուներ նախադարձականների համար: Նրանք, այդպիսի միջավայրում մեծանալով, ձեւավորում էին իրենց զգացմունքային աշխարհը, բարոյական կերպարն ու կամքը: Այդ շարքում առանձնահատուկ է «Հիշողություն» բանաստեղծությունը: Այն գրել է 1885 թ.-ի՝ ցարական իշխանությունների կողմից հայկական դպրոցների փակման ժամանակ ապրած ցավն արտահայտելու համար, սակայն այդ գողտրիկ ստեղծագործությունը հայ ժողովրդի տարաբախտ կյանքի իսկական պատմությունն է, որը ծիծեռնակի նման ստիպված էր ամեն տարի նորոգել բույնն ու հիշել իր հափշտակված ձագերին: Աղայանին հաջողվել է իր բանաստեղծություններում ժողովրդի հոգին ու զգացմունքները խոսեցնել առանց պաթոսի, առանց ավելորդ զեղումների, պարզ ու հաս-

կանալի: Աղայանի շինականը, ծանր, դժվար կյանքով ապրելով հանդերձ, հուսակտուր, կորագլուխ ու անճար չէ, նա մերքին մի հույս, այնուամենայնիվ, փայփայում է, որն իրեն ուժ է տալիս պահպանելու իր դաշտն ու հանդը, իր տունն ու երկիրը: Աղայանը գրքում ներառել է նաեւ մի շարք խաղ-բանաստեղծություններ: Զամոգված լինելով, որ խաղերը նախադարձական երեխաների դաստիարակության լավագույն միջոցներից են, նրանց համար գրել է նաեւ խաղեր, որոնք փոքրիկներին գիտելիք տալու հետ մեկտեղ զվարճացնում են եւ ուսուցման գործընթացը դարձնում ավելի ու հաճելի: Այդ բանաստեղծություններից են, օրինակ, «Ծիտը եւ բազեն» (1882), «Աքաղաղ» (1882), «Հնձվորներ» (1882), «Արեգակ» (1882) եւ այլն: Այսպես՝ «Ծիտը եւ բազեն»... Ծիտը ծառին ծըլվում էր, Ծի՛վ, Ծի՛վ, Ծի՛վ, Բազեն գլխին պտղտվում էր, Վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ... Ծիտը լռեց, Ծիտը վախեց, Վա՛յ, վա՛յ, վա՛յ... Բազե թռռռ, բազե թռռռ, Զա՛յ, հա՛յ, հա՛յ... Բազեն թռավ, բազեն փախավ, Ինչ լավ եղավ, Զե՛, հե՛, հե՛... Աղայանի չափածո գործերից ամեն-

անշանավորը, իհարկե, «Տորք Անգեղ եւ Զայկանուշ Գեղեցիկ» պոեմն է, որի նյութը փոխառել է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»: Աղայանի ստեղծագործության մեջ հատուկ տեղ են գրավում նաեւ հեքիաթներն ու պատմվածքները, որոնք՝ նույնպես շատ կարեւոր է համարել մատաղ սերնդի դաստիարակության համար: Բազմաթիվ հեքիաթներ կոկելով, մշակելով, զարգացնելով եւ գրական լեզվով օժտելով՝ Աղայանը դրանք ի սպաս է դրել մանուկների կրթությանը: Զանրահայտ են «Արեգնագան կան կախարդական աշխարհ» մեծ հեքիաթը, «Օձամանուկն ու Արեւիատը», «Արեւամանուկը», «Հազարան բլբուլը», «Այծատուրը», «Ձանգի Ջրանգին» եւ այլ հեքիաթներ, որոնք հավասարապես սիրված են: Աղայանի հեքիաթները հայ գեղարվեստական գրականության լավագույն էջերից են, ինքը՝ հայ հեքիաթագրության հիմնադիրը: Այդ ժանրում նրան հետագայում շարունակել են Յո՞վհ.Թումանյանը, Ավ.Իսահակյանը, Ստ.Զորյանը եւ ուրիշներ: ԶՈՎՅԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

ՊԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ - 75



ՆԿԱՐԶՈՒՐՈՒՆ ՆԿԻՐՎԱԾ ԶՈՒԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՒ

Թբիլիսյան հեղինակավոր iArt պատկերասրահում անցկացվեց հուշ-երեկո՝ նվիրված նկարչուհի Գայանե Խաչատրյանի 75-ամյակին: Ծանաչված թբիլիսյան արվեստագետներ Իս Բոկուչավայի ու Ալեքսանդր Պիրադովի կողմից կազմակերպված հուշ-երեկոն կոչված էր հարգանքի տուրք մատուցել զարմանալի եւ բացառիկ կնոջ՝ Գայանե Խաչատրյանի հիշատակին, ում ստեղծագործությունը լրիվությամբ փոխում է մեզ շրջապատող աշխարհը՝ այն վերածելով նրա երեւակայությամբ պատկերված կերպարների բազմերանգ տոնի:

Պատկերասրահի Սպիտակ դահլիճում ներկայացվել էին նկարչուհու ավելի քան քսան գործեր: Զուշ-յուրահատուկ գեղարվեստական ոճով մշակակալի երեւույթ է գեղարվեստում: Շատ տարիներ առաջ, նրա բարեկամ, կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովն ասել էր. «Եթե դուք չէք տեսել Գայանեի աշխատանքները, ապա դուք ոչինչ չգիտեք Թբիլիսիի մասին»: Զեւականորեն Գայանե Խաչատրյանն ինքնուրու մկարիչ էր՝ առանց գեղարվեստական հիմնարար կրթության (պատանեկության տարիներին չորս տարի սովորել է Թբիլիսիի Իսկոբ Նիկոլաձեի անվան ուսումնարանին առընթեր դպրոցում): Գայանե չի աշխատել գեղարվեստի սովորական ժանրերով՝ չի պատկերել նատյուրմորտներ, դիմանկարներ կամ բնանկարներ: Նկարչուհու կտավները նրա անհանգիստ հոգու, երեւակայության, երազների ու կանխատեսումների «պատկերներն» են: Գայանե Խաչատրյանի ընկալելի աշխարհը՝ անընդմեջ փառատոնի աշխարհն էր, նրա կտավներում ու գծանկարներում դերասաններ են, կրկեսի արտիստներ, զարմա-

նալի գլխակներով տիկնայք, փղեր, թզուկներ, առյուծներ, եղենական ֆանտաստիկ թռչուններ: Նկարչուհին ինքն ասում էր. «Սիրում եմ նկարել ճախարակներ, հավանաբար, դա այն առանցքն է, որի շուրջ պտտվում է կյանքը»: Նրա այդ աշխարհայացքը իր արտացոլումը գտավ «Քաղաքային ճախարակներում»:

Զուշ-երեկոյին Գայանե Խաչատրյանի մասին հիշողություններով ելույթ ունեցան արվեստագետ Ալեքսանդր Պիրադովը, Վրաստանի գրողների միության անդամ, բանաստեղծուհի Մարինա Կիրակոսովա-Մուսետովան, արվեստագետ Քեթեւան Տատանյան, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրջյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, արվեստագետ Զամլետ Զուկաշվիլին եւ ուրիշներ:

ՎԻԿՏՈՐՅԱ ՊԻՐԱԴՈՎԱ
Լուսանկարը՝ Էդուարդ Մեքրոպյանի

ՀԱՐՑ - ՊԱՏՃԱՍԽԱՆ ԱՅԼԱԶԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ

ԻՆՉՈ՞Վ Է ՕԳՏԱԿԱՐ ԿՆՈՋ ԵՎ ՏՂԱՄԱՐԴՈՒ ՄԻՋԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ



Սովորաբար, փղամարդու եւ կնոջ միջեւ բարեկամությունն ընկալվում է որպես բացառություն...

Գ.Միրզոյան Թբիլիսի

Խանդը եւ մրցակցության զգացումը տղամարդկանց խթանում է ցուցադրել իրենց սերը...

Պիկ սեքսուալ հետաքրքրություն են տածում այն կանանց հանդեպ...

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԱԼԿՈՂՈԸ ԵՎ ՀՂԻՈՒԹՅՈՒՆԸ

Այն, որ ալկոհոլը բացասական ազդեցություն է գործում մարդու առողջության վրա...



U.S.

Բաթումի

Ալկոհոլի չարաշահման ամենավատ հետևանքներից մեկը չծնված երեխայի վրա նրա թողած ազդեցությունն է...

հիվանդությամբ տառապող երեխաների շրջանում՝ նկատվում են խոսքի հետ կապված խնդիրներ...

Եթե մայրը, հղիության ընթացքում, նույնիսկ չափավոր քանակությամբ է ալկոհոլ ընդունել...

ՀԵՏԱՔՐԵՒՐ Է

ՓԱՍՏԵՐ՝ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

- 1. Չորս տարեկան երեխան օրական 437 հարց է տալիս: 2. Մինչեւ 116 տարի ապրելու շանս՝ 2 միլիոնից մեկը ունի: 3. Մարդու ժպտալու ժամանակ՝ աշխատում է 17 մկան: 4. Տղամարդիկ 10 անգամ ավելի շատ են տառապում դալտոնիզմով, քան կանայք: 5. Կանայք 2 անգամ ավելի շատ են թարթում աչքերը, քան տղամարդիկ: 6. Ամեն տարի մեղվի խայթոցից ավելի շատ մարդ է մահանում, քան օձի: 7. Անհմար է լեզվով կպչել սեփական արմուկին: 8. Մարդ կարող է ցավ զգալ...

- մարմնի այն մասի հատվածում, որը կորցրել է: Այս երեւոյթը անվանում են կարծեցյալ ցավ: 9. Աշխարհի ամենաերիտասարդ ծնողները եղել են 8 եւ 9 տարեկան: Նրանք ապրում էին Չինաստանում: 10. Շիկահեր տղամարդկանց բեղերն ավելի արագ են աճում քան սեւահերերինը: 11. Փռչտալ բաց աչքերով անհմար է: 12. Մարդու մարմնում կա այնքան քանակությամբ յուղ, որքան անհրաժեշտ է՝ 7 կտոր օճառ պատրաստելու համար: 13. Ցուցամատը ամենագալուն մատն է:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ԱՎԱՐՏՈ՞Վ ԿԵՐՋԻՆ ԶԱՆԳ

Իր վերջն ունի ամեն հեքիաթ: Իր վերջն ունի նաեւ դպրոցական հեքիաթը: Վերջին զանգ, ուսումն ավարտող դպրոցականների ավանդական տոնը: Վերջին զանգն անց է կացվում մայիսի վերջին, երբ ուսումն արդեն ավարտված է, իսկ ավարտական քննությունները դեռեւս չեն սկսվել: Վերջին զանգը վերջակետ է դնում երկար տարիներ անցկացրած ուսումնական մարտնչին՝ իր դասերի եւ դասամիջոցների, գրավոր եւ տնային աշխատանքների հետ միասին: Վերջին զանգը մեծ դպրոցական տոն է, որն ուղված է շրջանավարտների, ուսուցիչներին եւ ծնողներին: Այն իր մեջ ներառում է հյուրերի, տնօրենի, առաջին ուսուցչուհու, ծնողների, առաջին դասարանցիների եւ 9-րդ ու 11-րդ դասարանցիների ավարտական խոսքերի ներկայացումներ:

Մեզնից յուրաքանչյուրի կյանքը բաժանված է փուլերի՝ առաջին քայլ, առաջին բառ, առաջին ատամ, առաջին դասարան... Դրանց այստեղից էլ սկսվում է մի երկար, պատասխանատու ընթացք՝ ճանապարհ դեպի կրթություն: Այս ճանապարհը սկզբում նոր է լինում, առաջին հայացքից գուցե անհյուրընկալ ու պահանջկոտ:



սենյակները եւ ուսուցիչների հետ միասին վերհիշում դպրոցական կյանքի 12-ամյա ճանապարհը, որով անցել են միասին: Ամեն մեկի աչքերում կլինի արտասովոր հուզմունք. պատճառը մեկն է՝ հրաժեշտ: Այդ պահին յուրաքանչյուրի սրտում մի պարզ իրականության գիտակցում վերջին զանգի դողանքներով ազդարարվում է չափա-

Բայց բավական է, որ լինի առաջին հանդիպումը դպրոցի, ուսուցչի հետ, եւ հասկանում ես, որ ամեն բան այլ տեսք ունի: Դպրոցական կյանքն իր բազմաբնույթ առօրյայով, խնդիրներով, զվարճանքով երբեք չի մոռացվում: Մեզնից ամենքը, որ տարիքում էլ գտնվի, միշտ հիշում է այդ օրը՝ անհոգ, երջանիկ: Ահա բացվում է առաջին հա-

յացքից սովորական օրը... Բայց հավատացեք, որ այդ օրը հիշարժան է մի սերնդի համար, ով լքում է տաքուկ, ապահով, միշտ ներող, սիրող, հանդիմանող, կրթող, կերտող, իրեն 10 տարի խնամքով պահած տունը՝ դպրոցը: Դպրոցներում հնչում է վերջին զանգը... Աշակերտներն այդ օրը հուզված մտնում են իրենց դասա-

հասության եւ երիտասարդական կյանքի սկիզբը: Վերջին զանգն ազդարարված է: Մեր այսօրվա «հերոսներից» շատերն արդեն հստակ ուղեւոր են իրենց ճանապարհը, որոշները՝ դեռ ոչ, բայց նրանք բոլորն այսօր ոտք են դնում կյանքի մի նոր փուլ, որ իր հետ կբերի նորը: Մնաս բարո՛վ, դպրո՛ց:



Վերջին զանգի ավանդույթը

Ըստ ավանդույթի, աղջիկները հագնում են դպրոցական համազգեստ, առավել հազվադեպ՝ սեւ բլուզ մուգ գույնի կիսաշրջագեստով: Երիտասարդ տղաները հագնում են կոստյում: Ավանդույթի համաձայն՝ վերջին զանգին տղաները եւ աղջիկները իրենց հագուստի վրայից կապում են ժայպեկներ՝ «Շրջանավարտ» մակագրով, իսկ կոստյումների վրայից (աղջիկների

համար գոգնոցների) կպցնում են ոչ մեծ չափի զանգակներ: Տոնելու ժամանակ՝ առաջին հնչում են զանգակները, ինչը արտահայտում է դասերի սկիզբն ու վերջը ներկայացնող դպրոցական զանգի խորհուրդը: Զանգակները հաճախ հնչեցնում է առաջին դասարանի աշակերտուհին, որին ուղեկցում է 11-րդ դասարանի աշակերտը: Շրջանավարտները դուրս են գալիս փողոց եւ երկինք բաց թողնում փուչիկներ, ինչպես նաեւ պարում են իրենց առաջին դպրոցական վալսը:

համար գոգնոցների) կպցնում են ոչ մեծ չափի զանգակներ: Տոնելու ժամանակ՝ առաջին հնչում են զանգակները, ինչը արտահայտում է դասերի սկիզբն ու վերջը ներկայացնող դպրոցական զանգի խորհուրդը: Զանգակները հաճախ հնչեցնում է առաջին դասարանի աշակերտուհին, որին ուղեկցում է 11-րդ դասարանի աշակերտը: Շրջանավարտները դուրս են գալիս փողոց եւ երկինք բաց թողնում փուչիկներ, ինչպես նաեւ պարում են իրենց առաջին դպրոցական վալսը:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Պետք է մեծ մարդոց ընկերանալ՝ ներշնչվելու համար անոցն մեծ պատկերներ: Պատկերները ամենեն զգվելի բանն է Արեւիկ տակ: ՎԱԿԱՆ ԹՈՒԹՎԵՆՑ (1889-1938) Հայ գրող, արձակագիր Մերթ ասելն է չասելուց լավ, մերթ՝ ասելուց կգա վնաս: ՇՈՒԱՆ ՈՌԻՍՏԱՎԵԼԻ (1172-1216) Վրաց բանաստեղծ Վատ պետական գործիչներն ընտրվում են քվեարկությանը

չմասնակցող... լավ քաղաքացիների կողմից: ԴԻՈՂԵՆԵՍ (մ.թ.ա.412-մ.թ.ա.323) Հույն փիլիսոփա Երբ ես մտաբերում եմ, որ Աստված արդարամիտ է, սարսափից սարսուռում եմ իմ հայրեցիքի համար: ՋԵՅՆԵՐՍՆ (1743-1826) Ամերիկայի 3-րդ նախագահ Ով տեսել է տղամարդու թշվառությունը, նա ոչինչ չի տեսել, պետք է տեսնել կնոջ թշվա-

ռությունը. ով տեսել է կնոջ թշվառությունը, նա էլ ոչինչ չի տեսել, պետք է տեսնել երեխայի թշվառությունը: ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ (1802-1885) Ֆրանսիացի գրող Երբ սարսափում ես շնից, համոզված ես, որ շան պոչը, շան բերանից գատ, խածոդ երախ է: ՈԱՖԱՅԵԼ ՏԵՐ-ՍԱՐՅԱՆ «Վրաստանի» ընթերցող



ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

Գրականության դասին. - Երեխաներ, ես ձեզ հանձնարարել էի՝ արձակուրդների ժամանակ կարողալ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանքը»,- հիշեցնում է ուսուցչուհին: Լռություն: Տեղից ելնում է աշակերտներից մեկը. - Հարգելի, «Վարդանանքը» պետք էր կարդալ: - Այո՛, այո՛:

- Վա՛յ... Բա ես արտագրել եմ: Շնորհակա՛ն ժողովի ժամանակ՝ մաթեմատիկայի ուսուցիչը բողոքում է ծնողներին նրանց երեխաներից. - Ձեր երեխաները շատ հիմար են: Այսօր ես նրանց բացատրում էի նոր թեմա: Մեկ անգամ բացատրեցի՝ նրանք չհասկացան, երկրորդ անգամ բացատրեցի՝

դարձյալ չհասկացան: Երրորդ անգամ բացատրելիս՝ ես հասկացա, բայց նրանք չհասկացան: Դպրոցում ուսուցչուհին հարցնում է, թե ո՞վ գիտի անզլերենի այբուբենը: Շրագրավորողի որդին պատասխանում է. - QWERTYUIOP..... Ուսուցիչը հարցնում է աշակերտին: - Բանջար-արքստանային կուլտուրաների մեջ ինչե՞ր են մտնում: - Որ չափառապատած չլինի՝ էլ էլ կմտնի,- պատասխանում է աշակերտը: Ուսուցիչը՝ աշակերտին. - Պատմիր Տիգրան Մեծի մասին: - Չեմ կարող, ընկեր Մանուչարյան, հայրիկս ասել է, որ մահացած մարդկանց հետեւից չեն խոսում:

ՎԱՐՊԱՏՈՆ - 2017

ՀԱՄԱՅՆ ՍԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ



«Սայաթ-Նովան մեկն է այն առաջնակարգ բանաստեղծներից, որոնք իրենց հանճարի գործընթացում դարձրել են մի ժողովրդի սեփականությունը լի-մելուց եւ դառնում են համայն մարդկության սիրելին»:

ավելի ենք մերձենում՝ հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն ստեղծագործող միջնադարի հայ մեծ սիրերգակին: Սայաթնովյան Վարդատունը, որ հիմնադրվել է հանճարեղ հետնորդ Յուլիանոս Թումանյանի կողմից, տեղի կունենա մայիսի 28-ին, ժամը 12-ին, Թբիլիսիի «Մեյդան» թաղամասի Սուրբ Գեորգ եկեղեցուն հարակից Վախթանգ Գորգասալու անվան հրապարակում: Վարդատունին կմասնակցեն Հայաստանից, Վրաստանի տարբեր շրջաններից մտավորականներ, ժողովրդական երգ ու պարի համույթներ:

ՄՐՑՈՒՅԹ - ՓՈՒՍՏՈՆ

ԱՆԱՀԻՏ ԱՏԵԼՄԱՇՈՎԱՆ՝ ՊԵՋԱՐՈՅԻ ՓՈՒՍՏՈՆԻ ԴՎՓՆԵԿԻՐ

Վրաստանում «վորքի վիրտուոզ» բնութագրումը ստացած ախալաբաթի պատանի դաշնակահար Անահիտ Ստեյնաշվիլի «Իշամեղվի թռիչքը»:




Տասնամյա դափնեկիրը կատարեց Առն Բաբաջանյանի «Վաղարշապատի պարը» եւ Լիկոլայ Ռիմսկի-Կորսակովի «Իշամեղվի թռիչքը»: Մրցույթին մասնակցում էին Վրաստանի, Իտալիայի, Գերմանիայի, Իրանի, Ադրբեջանի եւ Ղազախստանի պատանի դաշնակահարները: «Վրաստան» թերթը մեկ անգամ չէ, որ իր էջերում անդրադարձել է Անահիտ Ստեյնաշվիլի հաջողություններին մասին: Այնուամենայնիվ, նորից կրկնենք, որ Անահիտը տաղանդավոր պատանի դաշնակահարուհի է, սովորում է Ախալաբաթի երաժշտական դպրոցում (տնօրեն՝ Սվետլանա Կարոյան, որը Անահիտի ուսուցչուհին է): Հինգ տարեկանից դասական երաժշտության աշխարհ մտած Անահիտը, համավրացական «Ապագայի աստղեր» ամենամյա մրցույթների է հրավիրվել հանրաճանաչ դաշնակահար Էլիստ Բուլվաձեի երաշխավորությամբ: Հենց էլիստի միջնորդությամբ եւ TBC բանկի հովանավորությամբ, Անահիտը ապրիլյան յոթ օր անցկացրել է Փարիզում, ուր վարպետաց դասեր է առել հանրահայտ երաժիշտ Միշել Սոնիի մոտ: Հավելենք, որ ապագայի ճանապարհներ ու լայն հնարավորություններ բացող այս խոշոր միջոցառումն ընթանում էր Վրաստանի «Ապագայի աստղեր-2017» մրցույթ-փառատոնի շրջանակներում, որի կազմակերպիչները Վրաստանի արվեստների միության «Արվեստագետներ ապագայի համար», «Ապագայի աստղեր» արվեստի միջազգային կոմիտեն եւ Իտալիայի Պեզարո քաղաքի Ռենատա Տեբալդիի ու Մարիո Մոնակոյի անվան միջազգային ակադեմիաներն են: Այս տարի «Ապագայի աստղեր» մրցույթին մասնակցում էր 1000-ից ավելի մասնակից՝ երկրի 85 երաժշտական ուսումնարանից, քուլեջից եւ կոմսերվատորիայից:

վանավորությամբ, Անահիտը ապրիլյան յոթ օր անցկացրել է Փարիզում, ուր վարպետաց դասեր է առել հանրահայտ երաժիշտ Միշել Սոնիի մոտ: Հավելենք, որ ապագայի ճանապարհներ ու լայն հնարավորություններ բացող այս խոշոր միջոցառումն ընթանում էր Վրաստանի «Ապագայի աստղեր-2017» մրցույթ-փառատոնի շրջանակներում, որի կազմակերպիչները Վրաստանի արվեստների միության «Արվեստագետներ ապագայի համար», «Ապագայի աստղեր» արվեստի միջազգային կոմիտեն եւ Իտալիայի Պեզարո քաղաքի Ռենատա Տեբալդիի ու Մարիո Մոնակոյի անվան միջազգային ակադեմիաներն են: Այս տարի «Ապագայի աստղեր» մրցույթին մասնակցում էր 1000-ից ավելի մասնակից՝ երկրի 85 երաժշտական ուսումնարանից, քուլեջից եւ կոմսերվատորիայից:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՍԱՆՋՅԱՆ

ԻՆՔՆԱՅՐՈՒՄՈՎ ԱՊՐԱԾ ԿՅԱՆՔ



ՍՈՒՐԵՆ ԵՂԻԱԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Եղիազարյանը, ում կյանքը եղել է համակ սեր ու ցվիրում սիրելի թատրոնին:

Սուրեն Եղիազարյանը ծնվել է 1922 թվականին, Թբիլիսիում: 1939 թվականին, ավարտելով միջնակարգ դպրոցը, սկսել է աշխատանքային գործունեությունը... 1943 թվականին մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին՝ հաղթանակը տոնելով Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում:

1946 թվականին ընդունվել է Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտ, որը հաջողությամբ ավարտելուց հետո, 1954 թվականին աշխատանքի է անցել Թբիլիսիի Պետրոս Ադամյանի (այն ժամանակ՝ Ստեփան Շահումյանի) անվան պետհայրամայի թատրոնում: Իր բնատուր տաղանդի եւ հրաշալի բեմական արտաքինի շնորհիվ, Սուրեն Եղիազարյանը մշտապես կերտել է դրամատիկ հերոսների կերպարներ՝ տարիների ընթացքում դառնալով մեր բեմի ճանաչված արվեստագետներից մեկը: Նա դրամատիկ հուզական կերպարներ մարմնավորելու բարձրարվեստ վարպետ էր եւ ժամանակի ընթացքում համալրեց թատրոնի այնպիսի փառաշեղ դերասանների շարքերը, ինչպիսիք էին Դորի Ամիրբեկյանը, Մարիամիկ Մոծուռյանը, Էմմա Ստեփանյանը, Բաբկեն Ներ-

սիսյանը, Արտեմ Լուսինյանը, Սերիկ Շելոյանը, Ասյա Ժամկոչյանը, Ավետիք Սանոսյանը, Ժիրայր Կարապետյանը, Սոս Սոսյանը, Արուս Ղարաջյանը եւ ուրիշներ:

Նրա մարմնավորած կերպարներն իրենց ուրույն տեղն են գրավել մեր հայ թատրոնի հարուստ ու բազմաբովանդակ պատմության մեջ. դրանք են՝ Իսիդորե՝ «Մեղադրական եզրակացություն», Ջիմզինով՝ «Պեպո», Օսիպ՝ «Ռեվիզոր», Հակոբ Ալաջյան՝ «Քո վերջին հարգվածը», Սաղաթել՝ «Պատվի համար» եւ այլն:

Սուրեն Եղիազարյանը դրամատիկական շնչի դերասան էր:

Սուրեն Եղիազարյանը անսահման բարի, զուսպ, հավասարակշռված ու խաղաղասեր մարդ էր, անդամաճան՝ թատրոնին եւ ընկերներին:

Սուրեն Եղիազարյանի ծառայությունները հայ թատրոնին աննկատ չեն մնացել: Նա պարգևատրվել է մեդալներով ու պատվոգրերով, արժանացել «Պատվո մեդալի»:

Նրա մահվան կապակցությամբ, մենք մեկ անգամ եւս խոնարհվում ենք նրա անմար հիշատակի ու գործի, հայասիրության, բարեկամասիրության առջեւ եւ Վերին Երկնավորին աղոթում նրա հոգու լուսավորության համար:

ՈՒՅԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի փոխտնօրեն

«Վրաստան» թերթի խմբագրությունը իր խորին վշտակցությունն է հայտնում Սուրեն Եղիազարյանի՝ թբիլիսահայ թատրոնի դերասանների լավագույն փառանդի ակնառու ներկայացուցչի, տաղանդաշատ, սիրված ու հարգված դերասանի, հիանալի մարդ-անձնավորության մահվան կապակցությամբ:



Աննա Սերգեյի ԳՅՈՒԼՅԱՆԱՆԻ մահվան կապակցությամբ եւ իր ցավակցությունն է բերում հանգուցյալի ընտանիքին, հարազատներին ու մտերիներին:

«Վրաստան» թերթի խմբագրությունը զորակցում է Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանին, սիրելի թրոջ՝



Թամար ԳՈԳԻԱՇՎԻԼՈՒ ողբերգական մահը եւ ցավակցում է հանգուցյալի մերձավորներին ու բարեկամներին:

Table with 6 columns and 9 rows containing numbers 1 through 55.

Large advertisement for 'VRASTAN' magazine, including contact information and a list of authors.

Footer containing contact information for 'VRASTAN' magazine, including phone numbers, website, and address in Tbilisi, Georgia.